Հավելված
ՀՀ կառավարության
2023 թվականի ------- -- -ի
N --- -Ն որոշման

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքով սահմանված գիտական աստիճանի հավելավճարը (այսուհետ՝ Հավելավճար) գիտական աշխատողներին վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից ֆինանսական միջոցները գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններին և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ստորոբաժանումներին (այսուհետ՝ Կազմակերպություն) տրամադրելուն առնչվող հարաբերությունները:

2. Հավելավճարի իրավունք ունեն գիտական աստիճան ունեցող, գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ու գիտական կադրերի պատրաստման ծրագրերում (այսուհետ՝ Ծրագիր) ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողները (այսուհետ՝ Գիտական աշխատող):

3. Գիտական աշխատողներին Հավելավճարը վճարվում է ըստ աշխատած օրերի քանակի:

4. Մահվան պատճառով փոփոխության դեպքում Հավելավճարը տրամադրվում է անկախ տվյալ ամսում աշխատած օրերի քանակից:

5. Հավելավճար տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող գիտական աստիճան ունեցող Գիտական աշխատողներին, իսկ մինչև երեք

տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող Գիտական աշխատողներին Հավելավճարը չի տրամադրվում:

2. ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

6. Ծրագիր իրականացնող Կազմակերպությունը յուրաքանչյուր բյուջետային տարվա առաջին ամսվա առաջին տասնօրյակում Կոմիտեի առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով Կոմիտե է ներկայացնում Գիտական աշխատողների Հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հայտ (այսուհետ՝ Հայտ), որի դիմելու ընթացակարգը սահմանում է Կոմիտեն:

7. Հայտում ներառված տվյալների համապատասխանության դեպքում Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է Գիտական աշխատողներին Հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հանձնարարության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

8. Ծրագիր իրականացնող Կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչև 3-րդ տասնօրյակի վերջին աշխատանքային օրը Համակարգի միջոցով Կոմիտե է ներկայացնում Ծրագրում ընդգրկված գիտական աստիճան ունեցող Գիտական աշխատողների թվաքանակի և ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն), իսկ վերջին եռամսյակի Հաշվետվությունը՝ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ին տասնօրյակը:

9. Եռամսյակի ընթացքում փոփոխությունների առկայության դեպքում Կազմակերպությունը Հաշվետվության հետ միասին Կոմիտե է ներկայացնում Հայտում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները (ընդունման, ազատման, երկարատև արձակուրդի կամ երկարատև գործուղում ուղարկելու հրամաններ և այլն):

10. Հաշվետու եռամսյակից շուտ կատարված, սակայն Հայտով չներկայացված փոփոխությունները, անկախ չներկայացման պատճառներից, հաշվի չեն առնվում:

11. Կազմակերպության կողմից սույն կարգով սահմանված ժամկետներում Հաշվետվությունը կամ այլ պահանջվող տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում

Հավելավճարների վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրումը Կոմիտեի կողմից դադարեցվում է:

12. Սույն կարգի 11-րդ կետով դադարեցված ֆինանսական միջոցների տրամադրումը վերսկսվում է սույն կարգով սահմանված Հաշվետվության կամ այլ պահանջվող տեղեկատվության ներկայացնելուց հետո՝ հաջորդող ամսվանից:

13. Սույն կարգի 11-րդ կետով դադարեցված ժամանակահատվածի համար Կոմիտեի կողմից Կազմակերպությանը ֆինանսական միջոցներ չեն տրամադրվում, որը հիմք չի հանդիսանում Կազմակերպության կողմից Գիտական աշխատողներին Հավելավճար չվճարելու համար:

14. Ծրագիր իրականացնող Կազմակերպությունը, յուրաքանչյուր բյուջետային տարվա վերջին եռամսյակի Հաշվետվությունը կազմելիս, անհրաժեշտություն առաջանալու պարագայում, Կոմիտեի հետ կնքում է Գիտական աշխատողներին Հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հանձնարարության պայմանագրի գնի կամ այլ պայմանների փոփոխության մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր):

15. Հայտի, Պայմանագրի, Հաշվետվության և Համաձայնագրի ձևերը գեներացնում է Համակարգը:

16. Կոմիտեն՝

1) հավաքագրում է Կազմակերպությունների կողմից տարեսկզբին Հայտով ներկայացված և եռամսյակային պարբերականությամբ Հաշվետվություններով ներկայացվող տվյալները.

2) հավաքագրված տվյալները ներառում է Ծրագրում ընդգրկված գիտական աստիճան ունեցող Գիտական աշխատողների վերաբերյալ ստեղծված շտեմարանում.

3) իրականացնում է ներկայացված տվյալների համեմատություն՝ համապատասխան փոփոխությունների ներառման և ամփոփման նպատակով.

4) Ծրագիր իրականացնող Կազմակերպություններին Գիտական աշխատողներին Հավելավճար վճարելու նպատակով ֆինանսական միջոցների փոխանցումն իրականացնում է յուրաքանչյուր ամսվա մինչև 15-ը՝ ըստ Կազմակերպությունների կողմից ներկայացված Հավելավճար ստացող Գիտական աշխատողների ճշգրտված թվաքանակի: